

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

31 Դեկտ. 1966

23 Դեկտ. 1966

Ն. Ս. Օ. Տ. Տ.

Վազգեն Առաքին,

Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Ս. Էջմիածին.

Սուրբ Ծնունդի եւ Նոր Տարիի բարեբաստիկ սուրճով, մեր անունով, ինչպէս եւ յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի Հայ գաղութին կը ներկայացնեմք ամենէն սրտագին շնորհաւորութիւններ. աղօթելով առ բարձրեալն Աստուած որ Զերդ Սուրբ Օծութեան պարգեւէ շարունակական առողջութիւն եւ բազում երկար ու երջանիկ տարիներ՝ լի յաջողութիւններով եւ բարօրութեամբ, անսասան պահելով մեր հաւատքի կեդրոն Սուրբ Էջմիածինը:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Նոոին Ս. Պօղոս Զ.,

Վատիկան.

Սուրբ Ծնունդի եւ Նոր Տարւոյ բարեբաստիկ սուրճով կը ներկայացնեմք մեր ամենէն ջերմ շնորհաւորութիւնները, Զերդ Սրբութեան մաղբ-ելով շարունակական առողջութիւն. իսկ Զեր եկեղեցիին՝ բարօրութիւն: Թող ամենակարողն Աստուած յաջողութեամբ պսակէ Զեր բոլոր սուրբ ծրագիրները:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

28 Դեկտ. 1966, Վատիկան.

31 Դեկտ. 1966

Ն. Ս. Օ. Տ. Տ.

Խորէն Առաքին,

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ,

Անրիիքս.

Սուրբ Ծնունդի եւ Նոր Տարիի երջանիկ սուրճով, կը ներկայացնեմք մեր լուսագոյն շնորհաւորութիւնները եւ մաղբ-անքներ՝ Զերդ Ս. Օծութեան առողջութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի պայծառութեան եւ Զեր խնամքին տակ գտնուող հաւատացեալներու երջանկութեան համար:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ն. Ամենապատուութիւն

Տ. Եղիշէ Արքեպս. Տէրաւրեան,

Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Մեր Տիրոջ Ծննդեան այս սուրբ օրուն, մեր անկեղծ շնորհակալութիւնները կը յայտնենք Զերդ Ամենապատուութեան եղբայրական շնորհաւորութիւններուն համար եւ կ'աղօթենք որ Քրիստոս Փրկիչը մեր խաղաղութեան օրհնութիւնը եւ հոգեկան լիութիւն պարգեւէ Զեղի եւ Զեր հաւատացեալ հօտին:

ՊՕՂՈՍ Զ.

23 Գեկտ. 1966

Նորին Սրբազնութիւն

Քէնքըրպլըրի Արքեպիսկոպոսին եւ
Առաջնորդին Համայն Անգլիոյ,
Լոնտոն.

Սուրբ Մնունդի եւ Նոր Տարիի բարե-
բաստիկ առիթով կը ներկայացնենք մեր ա-
մենէն անկեղծ շնորհաւորութիւնները,
Ձերդ Սրբազնութեան եւ Ձեր հաւատաց-
եալներուն մաղթելով երջանկութիւն եւ յա-
ջողութիւն, ու բարօրութիւն՝ մեր բոյր
Անկլիիքան եկեղեցիին:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

31 Գեկտ. 1966

Մեծայարգ

Պարոն Ա. Մանուկեան,
Նախագահ Հ. Բ. Բ. Միութեան,
Նիւ Եորք.

Նոր Տարիի եւ Սուրբ Մնունդի երջանիկ
առիթով, Ձեր առողջութեան եւ խաղաղ
կեանքին համար կը ներկայացնենք մեր ա-
մենէն անկեղծ ու ջերմ մաղթանքները: Թող
Աստուած օրհնէ ձեզ եւ յաջողութեամբ պը-
սակէ ձեր բոլոր ձեռնարկները:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

23 Գեկտ. 1966

Մեծայարգ

Պարոն Նախագահ
Կիւլպէնկեան Հիմնարկութեան,
Լիզպոն.

Սուրբ Մնունդի եւ Նոր Տարիի ուրախ
առիթով կը ներկայացնենք սրտագին շնոր-

հաւորութիւններ, մաղթելով երկար եւ եր-
ջանիկ կեանք մը եւ բարօրութիւն այն մեծ
Հիմնարկութեան՝ որուն կը նախագահէք:
Թող Աստուծոյ օրհնութիւնը ձեր բոլորին
վրայ բլլայ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

28 Գեկտ. 1966, Լիզպոն.

Ն. Ամենապատուութիւն

Տ. Եղիշէ Արքեպ. Տէրտէրեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Խորապէս շնորհակալ եմ Ս. Մնունդի եւ
Նոր Տարիի շնորհաւորութիւններուն հա-
մար եւ խոնարհաբար Ձերդ Ամենապատ-
ւութեան կը ներկայացնեմ լուսագոյն մաղ-
թանքներ:

ԱԶԵՐԵՏՕ ԲԵՐՏԻՊԱՆՕ

23 Գեկտ. 1966

Մեծայարգ

Պարոն Ռ. Կիւլպէնկեան,
Լիզպոն.

Ներկայացնելով Ս. Մնունդի եւ Նոր
Տարիի մեր ջերմ շնորհաւորութիւնները,
կ'աղօթենք Ձեր առողջութեան համար եւ
կ'օրհնենք Կիւլպէնկեան մեծ Հիմնարկու-
թիւնը:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

* Կիր. 1 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարեալ էր Հոգւ. Տ. Պարէտ Աբղ. Երէց-եան, որ Ս. Հաղորդութիւն տուաւ Թարգմանչաց Վարժարանի ուսանողութեան:

* Դշ. 4 Յուն.— Կէսօրէ կաթ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը «Հրաշափառ»ով մուտք զօրձեց չփեղօրէն զարդարուած Մայր Տաճար, ուր նախագահեց մեծահանգէս նախատեսակին: Արարողութեանց աւարտին, Ս. Աթոռոյ շարականի — «Օրհնեցէ՛ք զՏէր» — երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

* Եշ. 5 Յուն.— Ս. Գաթի մարգարէին Շւ Յակոբայ Տեառնեղոր տօնը — Տօն Առաքիլական Ս. Արոտոյ ներուսղէմի — կատարուեցաւ մեծաւոք Հանդիսաւորութեամբ եւ նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր՝ որ, ըստ սովորութեան, «Փառք ի բարձունքի տանն բարձրացաւ Տեառնեղոր Աթոռի պատուածղանին» ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտը, երբ ընդունեց Միաբանութեան եւ ուսանողութեան շնորհաւորութիւնները՝ աջահամբաւով: «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին, Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ Աբղ-կոսկոյցոս յատուկ մաղթանքներ բրաւ Ն. Ամենապատուութեան՝ Տեառնեղոր Աթոռի արժանաւոր Գահակալին բարօր կենաց եւ արեւշատութեան

եւ Ս. Աթոռոյ պայծառութեան եւ անսասնութեան: Նմանօրինակ մաղթանքներ բրաւ նաեւ օրուան պատարագիւր՝ Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս իր քարոզին մէջ: Քարոզի ընթացքին էր «Պուեա վէմ, եւ ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ»: Անդրադանալով Յակոբոս Տեառնեղորայր առաքելի կենանքին ու զօրձունչութեան, Սրբազան պատարագիւր ներկայացուց զայն որպէս վէմը քրիստոնէական առաջին եկեղեցիին: Ու վեր առաւ այն դերը՝ զոր այն Աթոռին է կղած մութ ու զաման դարերու ընդմէջէն: Քարոզին կաթ, ընկալելով սովորութեան համաձայն, տեղի ունեցաւ Հոգեհոն-գրտեան Հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյ հանդուցեալ պատրիարքաց Հոգիներուն համար, հանդիսաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Ուր. 6 Յուն.— Ս. Ստեփանոսի նախատեսակին ի Ս. Յակոբ, նախագահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Տօնին բուրժառակիր Հայրերն էին Հոգւ. Տ. Դանիէլ Վրդ. Շամիւան եւ Հոգւ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան:

* Շր. 7 Յուն.— Ս. Ստեփանոսի նախակալին: Սարկաւազաց տօնը Հանդիսացող այս տօնը Ս. Աթոռն ներս կատարուեցաւ մեծ շուքով: Չորս Սարկաւազներ, առաւտեան ժամերգութեան վերջին ժամին, զոհարարող սողաւարաներով եւ ոսկեթել շապիկներով, տապանակ եւ բուրժառ ձեռքին, ստանդորդութեամբ երկու խնկարկու վարդապետներուն, պսնծացուցին յիշատակը իրենց մատուցուրին: Հանդիսութեան կը նախագահէր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ Մայր Տաճարի աւանդատուն — Ս. Ստեփանոս մատրան — աւագ սեղանին վրայ: Ժամարարն էր Աթ. Տ. Կարապետ Ա. Քհնյ. Անդրէասեան:

23 Գեկտ. 1966

27 Գեկտ. 1966, Լիզպոն.

Մեծայարգ

Պարոն Գ. Էսաեան,
Լիզպոն.

Երջանիկ Ս. Ծնունդի եւ Նոր Տարիի մեր անկեղծ շնորհատուութիւնները կը ներկայացնեմք, աղօթելով Ձեր առողջութեան եւ Կիւլալէնկեան Հիմնարկութեան բարօրութեան համար:

ԵՂԻՇԷ ԹՐԳԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԻՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱԿԵՄԻ

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արք. Տէրաւրեան,
Պատրիարք Առաքիլական Ս. Արոտոյ,
Ներուսղէմ.

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ամանորի եւ Ս. Ծնունդի առիթով Ձեր մաղթանքներուն եւ սղօթքներուն համար շնորհակալ եմ: Պիտի փափաքէի փոխադարձել Ձեր շնորհատուութիւնները, մաղթելով Ձեր Ամենապատուութեան արեւշատութիւն եւ պայծառութիւն Առաքիլական Ս. Եկեղեցւոյ:

Յարգումներով՝
Գ. Լ. ԷՍԱԵԱՆ